Երևանի քաղաքապետարան

ՊԱՇՏՈ ՆԱԿԱՆ

European Bank
for Reconstruction and Development

# ՀԱՅԱՍՏԱՆ. ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ – ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## «ESDD2»

## ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**19 մայիսի, 2015թ.**

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ հ. C29500/AMIF-2014-07-07

---



Պատվիրատու՝

**Երևանի քաղաքապետարան**

Խորհրդատու՝

**համատեղ ձեռնարկություն**

BERNARD INGENIEURE

HYDRO INGENIEURE CONSULTING & ENGINEERING


«BERNARD Ingenieure ZT GmbH»

Բանհոֆշտրասե 19

A-6060 Հալ-ին-Տիրոլ, Ավստրիա

«HYDRO INGENIEURE Umwelttechnik GmbH»

Շտայներ լանդշտրասե 27ա

A-3504 Կրեմս-Շտայն, Ավստրիա

# Ներկայացման գրաֆիկ

| ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄ | 7332_Solid_Waste_Yerevan_ESDD_02_20150519.docx |
|---|---|

| ԽՄԲԱԳՐՈՒՄ | ԱՄՍԱԹԻՎ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|
| 00 | 21.10.2014 | Սևագիր տարբերակ |
| 01 | 19.12.2014 | Վերջնական տարբերակ |
| 02 | 20.02.2015 | Վերջնական տարբերակ (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի մեկնաբանություններով) |
| 03 | 27.03.2015 | Վերջնական տարբերակ (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի մեկնաբանություններով II) |
| 04 | 27.04.2015 | Վերջնական տարբերակ (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի մեկնաբանություններով III) |
| 05 | 19.05.2015 | Վերջնական տարբերակ (հրապարակման համար) |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷՋ

**1. ՇՆԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ .......... 4**
**1.1 Քննարկումների և նախագծի հրապարակման իրավական շրջանակը .......... 4**
1.1.1 Միջազգային համատեքստ .......... 4
1.1.2 Հայաստանի օրենսդրությունը .......... 4
**1.2 ՇՆ ուղղությամբ նախկինում իրականացված քայլերի ամփոփում .......... 8**
**1.3 Շահառուների սահմանում .......... 8**
**1.4 Անմիջական ազդեցությունը կրող շահառուներ .......... 8**
**1.5 Ոչ անմիջական ազդեցությունը կրող շահառուներ .......... 9**
**1.6 Կանանց ներգրավվածության գնահատում .......... 9**
**1.7 Հետագա քննարկումների համար գործողությունների ծրագիր .......... 11**
**1.8 Հրապարակման ծրագիր .......... 19**
1.8.1 Տվյալների հրապարակում .......... 19
**1.9 Հանրային քննարկումներ և հրապարակում .......... 21**
1.9.1 Առաջին հանդիպում .......... 21
1.9.2 Երկրորդ հանդիպում .......... 21
**1.10 Հանրային բողոքների մեխանիզմ .......... 22**

# 1. ՇՆԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մայրաքաղաք Երևանում նախատեսվում է հին սանիտարական աղբավայրի կողքին կառուցել նորը: Նոր աղբավայրը կզբաղեցնի շուրջ 29 հա տարածք: Նոր աղբավայրը պետք է համապատասխանի ԵՄ՝ աղբավայրերին ներկայացվող հանձնարարականին: Աղբավայրի շահագործման ժամկետը 30 տարի է: Այս նախագիծը համապատասխանում է նաև Հայաստանի՝ թափոնների կառավարման ազգային ռազմավարությանը:

Այս փաստաթուղթը Երևանում աղբավայրի նախագծի Շահառուների ներգրավման ծրագիրն (ՇՆԾ) է: Այս ՇՆԾ-ն ստեղծվել է տվյալ նախագծի համար և վերաբերում է նախագծի հետագա փուլերին՝ նախագծմանը, կառուցմանը և շահագործմանը: ՇՆԾ-ը նպատակ ունի նախագծի իրականացման ազդեցությունը կրող և այլ շահառուների պատշաճ կերպով և ժամանակին տեղեկացումը՝ հնարավորություն ընձեռելով նրանց արտահայտելու իրենց կարծիքները և մտահոգությունները, որոնք կարող են հաշվի առնվել նախագծին վերաբերող որոշումների կայացման ընթացքում: Ծրագրում քննարկվում են նաև շահառուների ընդգրկման կիրառելի միջոցներ, առաջարկվում են դրանց իրականացման տարբերակներ:

## 1.1 Քննարկումների և նախագծի հրապարակման իրավական շրջանակը

### 1.1.1 Միջազգային համատեքստ

ՇՆԾ նախապատրաստման համար կիրառելի են հետևյալ միջազգային փաստաթղթերը.

ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի՝ Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա),*«Օրհուսի կոնվենցիան բազմակողմ համաձայնագիր է, որով քաղաքացիներին ընձեռնվում են շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու ավելի լայն հնարավորություններ և երաշխավորվում են կարգավորման թափանցիկ և վստահելի գործընթացներ: Կոնվենցիան քաղաքացիական հասարակության և կառավարությունների միջև գործուն և վստահելի հարաբերություններ կառուցելու միջոցով շրջակա միջավայրի կառավարման ցանցն ընդլայնելու հնարավորություն է և որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցության կարևորությունը բարձրացնելու և արդարադատության հասանելիությունը երաշխավորելու համար ստեղծված մեխանիզմի արդիականացում՝ թափանցիկ կառավարում՝ միտված շրջակա միջավայրի հանդեպ պատասխանատու հասարակության կայացմանը»:*

- Շրջակա միջավայրի վրա որոշ հանրային և մասնավոր նախագծերի ազդեցության գնահատման վերաբերյալ ԵՄ 85/337/EEC հանձնարարականը՝ փոփոխության ենթարկված 97/11/EC հանձնարարականով:

### 1.1.2 Հայաստանի օրենսդրությունը

Հայաստանը ստորագրել է մի շարք կոնվենցիաներ և միջազգային պայմանագրեր, որոնք

ապահովում են նախագծին առնչվող հանրային քննարկումների գործընթացի հիմքեր, այդ թվում՝ հետևյալ օրենսդրությունը.

| հ. | ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԱՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ | ՈՒԺԻ ՄԵՋ Է | ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է | ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է | ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Միջազգային կարևորության ջրաճահճային տարածքների, հատկապես որպես ջրլող թռչունների բնադրավայր, (Ռամսար, 1971) | 1975 | 1993 | Վավերացվել է ԽՍՀՄ կողմից | |
| 2 | Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992) | 1993 | 1992 | 1993 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ.-ին |
| 3 | Կարտախենայի կենսաբանական անվտանգության արձանագրություն (Կարտախենա, 2000) | | 2000 | 2004 | |
| 4 | Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992) | 1994 | 1992 | 1993 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ.-ին |
| 5 | Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997) | | | 2002 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2003 թ.-ին |
| 6 | Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման կոնվենցիա (Ժնև, 1979) | 1983 | | 1996 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ.-ին |
| 7 | Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կոնվենցիա (Էսպո, 1991) | 1997 | | 1996 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ.-ին |
| | Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման արձանագրություն (Կիև, 2003) | | 2003 | | |
| 8 | Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին կոնվենցիա (Հելսինկի, 1992) | 2000 | | 1996 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ.-ին |

| հ. | ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԱՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ | ՈՒԺԻ ՄԵՋ Է | ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է | ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է | ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|
| | Անդրսահմանային ջրերում արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության համար քաղաքացիական պարտավորության և վնասի փոխհատուցման մասին արձանագրություն (Կին, 2003) | | 2003 | | |
| 9 | ՄԱԿ-ի խիստ երաշտի և/ կամ անապատացման դեմ պայքարի կոնվենցիա (Փարիզ, 1994) | 1996 | 1994 | 1997 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ.-ին |
| 10 | Վտանգավոր թափոնների միջսահմանային տեղափոխման և դրանց վերացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին կոնվենցիա (Բազել, 1989) | 1992 | | 1999 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ.-ին |
| 11 | Օզոնային շերտի պաշտպանության մասին Վիեննայի կոնվենցիա (Վիեննա, 1985) | 1988 | | 1999 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ.-ին |
| | Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին արձանագրություն (Մոնրեալ, 1987) | 1989 | | 1999 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ.-ին |
| 12 | Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրհուս, 1998) | 2001 | 1998 | 2001 | |
| 13 | Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին կոնվենցիա (Ռոտերդամ, 1998) | | 1998 | 2003 | |

| հ. | ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԱՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ | ՈՒԺԻ ՄԵՋ Է | ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է | ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է | ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|
| 14 | Միջսահմանային ջրահոսքերի և միջազգային լճերի պահպանության և օգտագործման կոնվենցիա (Հելսինկի, 1992) | 1996 | 1999 | | |
| | Ջրի և առողջության վերաբերյալ արձանագրություն (Լոնդոն, 1999) | | 1999 | | |
| 15 | Օրգանական ծագում ունեցող կայուն աղտոտող նյութերի մասին կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001) | | 2001 | 2003 | |
| 16 | Շրջակա միջավայրի վրա ներգործության մասին կոնվենցիա | 1978 | | 2001 | Վերագրանցվել է |
| 17 | Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա, 2000) | | | 2004 | |
| 18 | Մշակույթի և բնության համաշխարհային ժառանգության պահպանման մասին կոնվենցիա (Փարիզ, 1972) | | | 1993 | |
| 19 | Էներգետիկ խարտիայի համաձայնագիր (Լիսաբոն, 1994) | | | 1997 | |
| | Էներգետիկ խարտիային կից՝ էներգետիկ արդյունաբերության հարցերի և էկոլոգիական հարակից ասպեկտների արձանագրություն (Լիսաբոն, 1994) | | | 1997 | |
| 20 | Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիա (Բեռն, 1979) | 1982 | 2006 | | |

*Աղյուսակ 1 Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների սահմանը և նոր աղբավայրի տարածքը*

- Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կոնվենցիա (Էսպո, 1991),
- Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կոնվենցիայի շրջակա միջավայրի վրա ազդեցության

ռազմավարական գնահատման արձանագրություն (Կիև, 2003),

- Անդրսահմանային ջրահոսքերի և միջազգային լճերի պահպանության և օգտագործման կոնվենցիա 1992 (Հայաստանի կողմից ստորագրված չէ),
- Անդրսահմանային ջրահոսքերի և միջազգային լճերի պահպանության և օգտագործման կոնվենցիայի ջրի անվտանգության և առողջապահության հարցերի վերաբերյալ արձանագրություն (1999)

Շահառուների ներգրավումը և հանրային քննարկումները նախատեսվել են նաև 2010 թվականին Հայաստանի քաղաքաշինության նախարարության կողմից ընդունված՝ Աղբավայրերի կառուցման և շահագործման ուղեցույցում:

## 1.2 ՇՆ ուղղությամբ նախկինում իրականացված քայլերի ամփոփում

Պատվիրատուի տվյալներով, Տարածքային կառավարման նախարարությունը Հայաստանում կոշտ թափոնների կառավարման վերաբերյալ սեմինարներ և աշխատանքային հանդիպումներ է անցկացրել: Նույն թեմայով մի սեմինար Ծաղկաձորում վերջերս կազմակերպել է ՎԶԵԲ-ը: (Թադևոսյան, Երևանի քաղաքապետարան, սեպտեմբեր 2014)

Օրենսդրությամբ նախատեսված հանրային լսումներ դեռևս չեն կազմակերպվել: Նուբարաշեն և Էրեբունի համայնքների ղեկավարները ևս հաստատել են, որ նախագծի վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու նպատակով հանրային հանդիպումներ դեռևս չեն կազմակերպվել: (Վեֆելնբերգ, «Bernard Ingenieure»-ի կողմից անցկացված հարցում, սեպտեմբեր 2014)

## 1.3 Շահառուների սահմանում

Ստորև բերվող ցանկում ընդհանուր ներկայացված են այն խմբերը, որոնք կարող են կրել նոր աղբավայրի կառուցման և շահագործման անմիջական ազդեցությունը.

Սահմանվել են հետևյալ խմբերը.

## 1.4 Անմիջական ազդեցությունը կրող շահառուներ

Անմիջական շահառուներ են այն մարդիկ, ովքեր տնտեսապես, սոցիալապես կամ առողջապահական տեսակետից կարող են կրել նախագծի ազդեցությանը: Ներքին շահառուներ են մարդկանց հետևյալ խմբերը.

- շինարարությունում ներգրավված բանվորները
- աղբահավաքները
- «Էրեբունի մաքրություն» ՍՊԸ-ն՝ որպես աղբավայրի շահագործման երկարաժամկետ վարձակալության պայմանագիր ունեցող ընկերություն
- Հողի սեփականատեր հանդիսացող Երևանի քաղաքապետարանը («Քաղաքային աղբավայր» ՓԲԸ)
- Հայաստանի պետական անտառային տնտեսություն՝ «Հայանտառ»-ը՝ որպես շրջակա (անտառային տարածք համարվող) հողատարածքի սեփականատեր (տե՛ս Քարտեզ YSW_ESIA_A1_03-ը, կադաստրային քարտեզ)

## 1.5 Ոչ անմիջական ազդեցությունը կրող շահառուներ

Ոչ անմիջական շահառուներ են իրենց իրավասությունների շրջանակում նախագծի ազդեցութունը կրող խմբերը.

<u>ՀՀ Բնապահպանության նախարարություն</u>

- պետական ոչ առևտրային կազմակերպություններ
- Կենսաբազմազանության քաղաքականության վարչություն
- Ջրային պաշարների քաղաքականության վարչություն
- Մթնոլորտային օդի քաղաքականության վարչություն

<u>ՀՀ Մշակույթի նախարարություն</u>

- Պատմության և մշակութային հուշարձանների պահպանության գործակալություն
- Մշակութային ժառանգության գործակալություն

<u>ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն</u>

<u>ՀՀ Առողջապահության նախարարություն</u>

- Սանիտարահիգիենիկ վերահսկողության վարչություն
- Հիգիենայի և հակահամաճարակային վերահսկողության պետական տեսչություն

<u>ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն</u>

<u>ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u>

<u>Երևանի վարչական շրջաններ</u>

- Էրեբունի
- Նուբարաշեն

<u>ՀԿ-ներ</u>

- «Հանրային բնապահպանական դաշինք » ՀԿ
- «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիա
- «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ

## 1.6 Կանանց ներգրավվածության գնահատում

Հայաստանյան աշխատաշուկայում կանայք ավելի թույլ են ներկայացված քան տղամարդիկ (55,9% և 72,8% համապատասխանաբար): Կանանց «համապատասխան» աշխատանքի տեսակների մասին հանրային պատկերացումներով և լրացուցիչ կրթական ծրագրերում կանանց գերներգրավվածությամբ պայմանավորված (ինչը միշտ չի երաշխավորում ավելի բարձր վարձատրվող աշխատանքի շուկա)՝ երկրում կա հորիզոնական խտրականություն: Կանանց մոտ երկու երրորդն աշխատում է գյուղատնտեսության և հանրային կառավարման ոլորտներում, որոնք տնտեսության

ամենացածր վարձատրությամբ հատվածներն են: Առկա է վարձատրության` սեռով պայմանավորված զգալի տարբերություն. միջինում կանանց ամսական եկամուտները կազմում են տղամարդկանց եկամուտների 65%-ը: Երեխաների խնամքի և տնտեսավարման հիմնական բեռն ընկնում է կանանց վրա: Երեխաների խնամքի ծառայությունները համարվում են ոչ հասանելի կամ շատ թանկ:

Քաղաքային ծառայությունների, այդ թվում՝ կոշտ թափոնների կառավարման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու վերաբերյալ կանանց և տղամարդկանց ակնկալիքները և նախապատվությունները հաճախ տարբեր են, հատկապես երբ խոսքը գնում է տնտեսական գործունեության տեսակներին և խնամքի պատասխանատվության ոլորտներին: Թափոնների առաջացման, դրանցից ազատվելու, կրկնակի օգտագործման, վերամշակման և կառավարման, ինչպես նաև ոլորտի աջակցությանն ուղղված գործունեության հարցերում առկա են սեռով պայմանավորված տարբերություններ: Օրինակ՝ վարձավճարների հավաքման ժամանակացույցը հաճախ որոշվում է առանց կոշտ թափոնները հավաքման վայր տանող կանանց օրվա գրաֆիկը կամ պատասխանատվությունները հաշվի առնելու: Համայնքի մաքրության պատասխանատվությունը հաճախ ստանձնում են կանայք և նրանց մասնակցությունը կարող է խաթարվել, եթե նրանք ստիպված լինեն թափոնները հասցնել հեռու կամ չլուսավորվող վայրերում տեղադրված աղբադույլերի մոտ: Աղբադույլերի չափը և դիզայնը կանանց օգտագործման համար հաճախ դժվարություններ են ստեղծում՝ հաշվի առնելով կանանց ֆիզիկական հնարավորությունները: Ծառայությունների դիմաց վճարելու հնարավորությունները և պատրաստակամությունը գենդերային գործոնով պայմանավորվող լրացուցիչ հանգամանքներ են: Օրինակ՝ մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ կանանց կարծիքը մեծապես ազդում է տնային տնտեսության կողմից բարելավված ծառայության դիմաց վճարելու պատրաստակամության վրա:

Ինչ վերաբերում է ծրագիրը իրականացնողին՝ Երևանի քաղաքապետարանին, ապա դրանում կանայք աշխատակիցների ընդհանուր թվի 53%-ն են կազմում: Քաղաքապետարանի աշխատակցիների ընդհանուր թիվը 1896-ն է, որոնցից 1003-ը կանայք են, 893-ը՝ տղամարդ: Վարչական բարձր պաշտոններ զբաղեցնող կանանց թիվը միայն 45-ն է (3-ը վարչության պետեր են, մնացածը՝ բաժնի պետեր): Սա կարող է նշանակել, որ կանայք հիմնական մաս չեն կազմում աղբահանության ծառայության որակի բարելավմանը վերաբերող հարցերի շուրջ որոշումներ կայացնելիս, թեև, ինչպես վերը նշվեց, կանայք առանցքային դեր ունեն թափոնների տնօրինման և համայնքի մաքրության հարցում:

Սա կարող է նշանակել, որ թափոնների տնօրինման ծառայությունների ընդլայնմանը վերաբերող քաղաքական մակարդակով որոշումների կայացումը չի կատարվում կանանց կողմից:

Աղբավայրի շահագործման համար «Էրեբունի մաքրություն» ՍՊԸ-ն ներգրավել է 6 աշխատակից, որոնցից 5-ը տղամարդ են, 1-ը՝ կին, ինչը համապատասխանում է 17% մասնաբաժնին: Սա կարող է պայմանավորված լինել թե՛ աղբավայրում ֆիզիկական որոշակի ուժ պահանջող աշխատանքի ծանր պայմաններով և թե՛ սեռով պայմանավորված աշխատանքի տեսակների բաշխմամբ և աշխատատեղերի հասանելիությամբ:

Այս տարբերությունը մեղմելու համար նոր աղբավայրի շահագործման համար կադրերի ներգրավման նպատակով և Երևանի քաղաքապետարանի լիազորությունների

շրջանակում, կիրավիրվի կանանց ներկայացուցիչ (կաղրերի ձևավորման հանդեպ ներկայացվող պահանջների համար տե՛ս ESDD 03): Շահագործող ընկերությունը պետք է ստանձնի կանանց հավասար համամասնությամբ ներգրավելու, հավասար վարձատրության և ոչ լրիվ օրով աշխատանքային ժամեր ապահովելու պարտավորություններ:

Շինարարության և շահագործման փուլում կարող են ի հայտ գալ գենդերով չպայմանավորվող պոտենցիալ ռիսկեր կամ խնդիրներ (օրինակ՝ պատահարներ, օդի աղտոտիչների արտանետումներ):

## 1.7 Հետագա քննարկումների համար գործողությունների ծրագիր

Առաջարկվող գործողությունները ներառում են տեղեկությունների հրապարակման խելամիտ ուղիներ՝ Երևանում ընդունված պրակտիկաների, ինչպես նաև փորձագիտական կարծիքի հաշվի առնմամբ:

Կարգավորող մարմինները և պատվիրատուն (փորձագետի աջակցությամբ) սահմանել են ներքին շահառուներին, ինչպիսիք են բնակիչները, ինչպես նաև արտաքին շահառուներին, ինչպիսիք են՝ մի շարք նախարարություններ, որոնք կարող են հետաքրքրված լինել դրանում:

Շահառուների յուրաքանչյուր խմբի համար բերվում է կապ հաստատելու միջոցների ցանկը, այդ թվում՝ մանրամասներ ստանալու համար հասցեները և կոնտակտային տվյալները, ինչպես նաև հատուկ ուղիներ, որոնցով հնարավոր կլինի տեղեկություններ տրամադրել շահառուներին, այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են հանրային խորհրդատվության հնարավորությունները կամ ընդունվող զգալի փոփոխությունները: Այս փաստաթղթի վերջում նշված հասցեով ընդունվում են կապը պահպանելու կամ այլ միջոցների բարելավմանն ուղղված առաջարկներ:

| ՇԱՀԱՌՈՒՆԵՐ | ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ | ԿԱՊԻ ՆՊԱՏԱԿԸ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ |
|---|---|---|---|
| **Անմիջական ազդեցությունը կրող շահառուներ** | | | |
| **Ժամանակավոր շինարար-բանվորներ** | | Վարքի կանոններ, հատուկ տեղեկություններ՝ վերակառուցված համալիրի վերաբերյալ | Տեղեկություններ պայմանագրում, հայտարարություններ ի տախտակի վրա, ուսուցում, բողոքների ներկայացման մեխանիզմ |
| **Աղբահավաքներ** | մինչև 200 նախագծի ազդեցություն ը կրող մարդ<br>(ներառյալ ընտանիքի բոլոր անդամները) | Աղբահավաքները պետք է տեղեկացվեն նոր աղբավայրի, դրա տարածք մուտք գործելու արգելքի և որպես հետևանք՝ տնտեսական վիճակի վատթարացման մասին: Անհրաժեշտ է նաև տեղեկացնել, թե ինչու են | Նրանց բնակման վայրում կանցկացվեն հանդիպումներ (նրանց բնակվելու վայրում առկա խաղահրապարակում)<br>Հանդիպումները կանցկացվեն նախքան |

| ՇԱՀԱՌՈՒՆԵՐ | ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ | ԿԱՊԻ ՆՊԱՏԱԿԸ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ |
|---|---|---|---|
| | | որոշ միջոցներ անհրաժեշտ (օրինակ՝ նոր աղբավայրի հանդեպ պահանջներ, ցանկապատեր, անվտանգության կանոններ)<br>Ավելին, անհրաժեշտ է իրականացնել կենսաապահովման պայմանների վերականգնման շրջանակային ծրագիր՝ ներառյալ լիարժեք մարդահամար, տնտեսական ազդեցության ուսումնասիրություն և նախագծի ազդեցությունը կրող անձանց համար անցումային շրջանում փոխհատուցում: Ծրագրում ներառման մատրիցան և փոխհատուցում ստանալու (մասնագիտական ուսուցում, սոցիալական փաթեթ և այլ տեսակի աջակցություն) համար համապատասխանության չափանիշներն անհրաժեշտ է հրապարակել, նկարագրել և մեկնաբանել: | շինարարությունը՝ ԲՍՀՈՒ իրականացման ընթացքում:<br>Այդ նպատակով անհրաժեշտ է հրավիրել անկախ փորձագետ, որն իրականացնում և մշտադիտարկում է կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագիրը: |
| **Հողի սեփականատեր** | Պետություն, Երևանի քաղաքապետարան | Երևանի քաղաքապետարանը պետք է պետական սեփականություն հանդիսացող հողը «Հայանտառ»-ին փոխանցելու հարցը քննարկի պետության հետ (թեև տարածքը ծրագրով հիշատակվում է որպես «աղբավայր») | Հանդիպումներ |
| **Ոչ անմիջական ազդեցությունը կրող շահառուներ** | | | |
| «Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն | | ԲՍՀՈՒ արդյունքների (և առաջին հանրային հանդիպման ընթացքում բարձրացված հարցերի | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, |

| ՇԱՀԱՌՈՒՆԵՐ | ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ | ԿԱՊԻ ՆՊԱՏԱԿԸ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ |
|---|---|---|---|
| (ՊՈԱԿ) (Բնապահպանության նախարարություն, ԲՆ) | | քննարկման արդյունքների) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի մասին: | զեկուցումներ<br>Պետ<br>Վահան Սահակյան<br>Հասցե՝ Կոմիտաս պող. 29 Երևան, 0012, Հայաստան<br>Հեռ.՝ (+374 10) 272007 |
| Կենսաբազմազանության քաղաքականության բաժին (ՀՀ բնապահպանության նախարարություն, ԲՆ) | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>վարչության պետ<br>Գագիկ Մանուչարյան<br>Հասցե՝ Բուզանդի փող. 1/3<br>0010, Երևան Հայաստան<br>Հեռ.՝ (+374 10) 527952 |
| Ջրային ռեսուրսների քաղաքականության բաժին (ՀՀ բնապահպանության նախարարություն, ԲՆ) | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>բաժնի պետ<br>Լիլիանա Ալիխանյան Հասցե՝ Կառավարական տուն 3, Հանրապետության հրապարակ, 0010, Երևան, Հայաստան<br>Հեռ.՝ (+374 10) 540867 |
| «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>Արփինե Հովհաննիսյան |

| ՇԱՀԱՌՈՒՆԵՐ | ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ | ԿԱՊԻ ՆՊԱՏԱԿԸ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ |
|---|---|---|---|
| Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա՝ ազգային ծրագիր | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>պարոն Արամ Գաբրիելյան |
| | | | |
| Մթնոլորտային օդի քաղաքականության բաժին (ՀՀ բնապահպանության նախարարություն, ԲՆ) | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>Ջառա Սարգսյան |
| Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժին (ՀՀ բնապահպանության նախարարություն, ԲՆ) | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության պետ Անահիտ Ալեքսանդրյան<br>Հասցե՝ Կառավարական տուն 3, Հանրապետության հրապարակ, 0010, Երևան, Հայաստան<br>Հեռ.՝ (+374 10) 585326 |
| Պատմամշակութային հուշարձանների պաշտպանության գործակալություն (ՀՀ մշակույթի նախարարություն) | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ |

| ՇԱՀԱՌՈՒՆԵՐ | ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ | ԿԱՊԻ ՆՊԱՏԱԿԸ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ |
|---|---|---|---|
| Մշակութային ժառանգության վարչություն (ՀՀ մշակույթի նախարարություն) | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ |
| ՀՀ տարածքային կառավարման նախարարություն (ՏԿՆ) | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>Արմեն Գևորգյան<br>Հասցե՝ 2 Կառավարական տուն, Հանրապետության հրապարակ, 0010, Երևան, Հայաստան<br>Հեռ.՝ (+374 10) 525274 |
| ՀՀ առողջապահության նախարարություն Սանիտարահիգիենիկ վերահսկողության վարչություն | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>տեսչության ղեկավար<br>Հասցե՝ 10 Գ. Հովսեփյան փող., Երևան, 0047, Հայաստան<br>Հեռ.՝ (+374 10) 520660 |
| ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>Նախարար<br>Արմեն Մովսիսյան<br>Հասցե՝ Կառավարական տուն 2, Հանրապետության հրապարակ, 0010, |

| ՇԱՀԱՌՈՒՆԵՐ | ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ | ԿԱՊԻ ՆՊԱՏԱԿԸ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ |
|---|---|---|---|
| | | | Երևան, Հայաստան<br>Հեռ.՝ (+374 10) 521964 |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայքում հրապարակում<br>հանրային հանդիպումներ, զեկուցումներ<br>Նախարար<br>Արթուր Գրիգորյան<br>Հասցե՝ Կառավարական տուն 3, Հանրապետության հրապարակ, 0010, Երևան, Հայաստան<br>Հեռ.՝ (+374 10) 526831 |
| Երևան, Էրեբունի շրջան | 120 000 | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ (տեղեկությունները կվերաբերեն միայն նրան, որ ընդլայնված ծառայությունները կունենան ավելի բարձր արժեք, թեև, առաջիկա 3-4 տարիների ընթացքում արժեքները կպահպանվեն, իսկ հարցերի դեպքում կարելի է էլեկտրոնային նամակ ուղղել Ռուդիկ Թադևոսյանին, 18.03.2015)<br>ՎԶԵԲ փաստաթղթերի հրապարակում | վեբ-կայք (հրապարակվելու է Երևանի քաղաքապետարական ի պաշտոնական էջում), սոցիալական ցանցեր, օրինակ՝ Ֆեյսբուք (քաղաքապետարանն արդեն ունի էջ, սակայն աղբավայրի նախագծին վերաբերող էջ չի վարվում), տեղական մամուլ, հեռուստատեսություն (քաղաքապետարանն ունի հատուկ եթերաժամ, օրինակ՝«Արմնյուզ» հ/ա-ով՝ 30 րոպե, շաբաթ և կիրակի օրերին), հանրային հանդիպումներ<br>շրջանի ղեկավար<br>Արմեն Հարությունյան |

| ՇԱՀԱՌՈՒՆԵՐ | ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ | ԿԱՊԻ ՆՊԱՏԱԿԸ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ |
|---|---|---|---|
| | | | Հասցե՝ Սասունի 87<br>Երևան<br>Հեռ.՝ (+374 10) 54 49 13 |
| Երևան, Նուբարաշեն շրջան | 9.700 | ՎԶԵԲ փաստաթղթերի հրապարակում | վեբ-կայք, սոցիալական ցանցեր, օրինակ՝ Ֆեյսբուք, տեղական մամուլ, հեռուստատեսություն<br>հանրային հանդիպումներ<br>շրջանի ղեկավար<br>Արթուր Կիրակոսյան<br>Հասցե՝ 4 Նուբարաշեն փող. 9<br>Երևան<br>Հեռ.՝ (+374 10) 47 60 50 |
| Հանրային բնապահպանական դաշինք | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | վեբ-կայք, սոցիալական ցանցեր, օրինակ՝ Ֆեյսբուք, տեղական մամուլ, հեռուստատեսություն<br>հանրային հանդիպումներ<br>Սիլվա Ադամյան<br>Էլ. փոստի հասցե՝ birdlovers@rambler.ru<br>Հեռ՝ (+374 94) 87 40 70 |
| «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ | | | Հանրային հանդիպում, զեկուցում<br>Ասոցիացիայի նախագահ<br>Կարինե Դանիելյան<br>Հեռ.՝ +374 10 52-23-27<br>Հեռ.՝ +374 91 36 58 86 |
| «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ | | ԲՍՀՈՒ արդյունքների (և հանրային հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուսումնասիրման) մասին տեղեկություններ, | 24 դ, Բաղրամյան պող.,<br>609 սենյակ<br>Երևան, Հայաստան<br>0019 |

| ՇԱՀԱՌՈՒՆԵՐ | ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ | ԿԱՊԻ ՆՊԱՏԱԿԸ | ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ |
|---|---|---|---|
| | | տեղեկություններ հետագա ընթացքի վերաբերյալ | հեռ. /ֆաքս. (+374 10) 523604<br>էլ.փոստ: office@awhhe.am |

## 1.8 Հրապարակման ծրագիր

### 1.8.1 Տվյալների հրապարակում

Շինարարության փուլում ազդեցությունները հիմնականում սահմանափակվում են նոր աղբավայրի տարածքով:

Շինարարական տրանսպորտային միջոցները կօգտագործեն նույն՝ արդեն գոյություն ունեցող քաղաքային ճանապարհները, որոնցից օգտվում են աղբատար մեքենաները: Այս մատակարարման ճանապարհների երկայնքի զգալի հատվածում բնակելի թաղամասեր չկան (կա մեծ գերեզմանոց):

Մատակարարման ճանապարհի այս հատվածից զատ, շինարարության ընթացքում լրացուցիչ բեռնատարերի օգտագործմամբ և ճանապարհի տրանսպորտային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված, այլընտրանքային ուղիների անհրաժեշտությունը չնչին է:

Պատվիրատուն, Նուբարաշեն և Էրեբունի շրջանների բնակչությունը աշխատանքային ժամանակացույցի մասին կտեղեկացվեն աշխատանքները սկսվելուց չորս շաբաթ առաջ, Երևանի քաղաքապետարանի վեբ-կայքում: Նուբարաշենի և Էրեբունու շրջանների վարչական շենքերի ընդունարաններում նաև կզետեղվեն աշխատանքները սկսելու մասին հիշեցում, բողոքների ներկայացման կարգը և թեժ գծի հեռախոսահամարը:

Կենդանի հանդիպումներ

Կկազմակերպվեն այցելություններ ծրագրի ազդեցությունը տնտեսապես և սոցիալապես անմիջականորեն կրող մարդկանց, հողի սեփականատերերին և աղբահավաքներին, կանցկացվեն անհատական հանդիպումներ և շփումներ:

Հանրային մասնակցությամբ հանդիպումներ

Շահառուների ակտիվ մասնակցության հարթակ ապահովելու համար նախագիծը ներկայացնելու և շահառուների խորհրդատվության ընթացքում անհրաժեշտ է անցկացնել հանրային հանդիպումներ: Հրավերներն անհրաժեշտ է ուղարկել.

- Նուբարաշեն և Էրեբունի վարչական շրջաններ
- Տեղի բնակիչներին
- Տարբեր նախարարությունների լիազոր մարմիններին
- Տեղական ՀԿ-ներին
- Տեղական ԶԼՄ-ներին

<u>Տեղեկությունների բաց տրամադրում՝ հատուկ նախատեսված վայրերում</u>

- Նախագծի մասին թռուցիկների, նախագծի առավելությունների մասին տեղեկատվական թերթիկների և լրագրերի բաժանում
- Վարչական շրջանների ղեկավարների միջոցով նախագծի մասին տեղի բնակչության իրազեկում և ընտրված հանգստյան օրերին նախատեսված հանդիպումների կազմակերպում (Հայաստանում տարածում ունեցող տարբերակ): Այս նպատակով կօգտագործվեն տպագիր պարբերականներ և ռադիո:

- Նուբարաշենում և Էրեբունիում հայտարարությունների տախտակների վրա փակցված հայտարարությունների միջոցով նախագծի և նախատեսված հանդիպումների մասին տեղի բնակիչների իրազեկում: Նաև, ՇՄՍԱԳ տեղեկությունների ամբողջական փաթեթի (ՈՏԱ (NTS), ՇՄՍԱԳ, ԲՍԳԾ, ԿՊՎՇԾ) տպագիր տարբերակով հասանելիություն՝ Նուբարաշեն և Էրեբունի շրջաններում առնվազն 120 օր, ինչպես նաև նախագծի իրականացման ընթացքում:
- Նախագծի վերաբերյալ տեղեկությունները Նուբարաշենում կարելի է ստանալ Երևան, 4 Նուբարաշեն, 9-րդ փողոց հասցեով, հեռախոսահամար՝ (+374 10) 47 60 50 (շրջանի ղեկավար՝ Արթուր Կիրակոսյան)

  Նախագծի վերաբերյալ տեղեկությունները Էրեբունիում կարելի է ստանալ Երևան, Սասունցի 87 փողոց հասցեով, հեռախոսահամար՝ (+374 10) 54 49 13 (շրջանի ղեկավար՝ Արմեն Հարությունյան)
- Ընդհանուր հանրության համար հարմարավետ վայրում փոստարկղի տեղադրում (օրինակ՝ Էրեբունիում և Նուբարաշենում վարչական շենքերում), որում հավաքվող նամակները պարբերաբար կհավաքվեն, կփաստաթղթավորվեն և կուսումնասիրվեն:

<u>Նախագծի վեբ-կայք</u>

Երևանի քաղաքապետարանն իր վեբ-կայքում պետք է մանրամասն տեղեկություններ զետեղի նախագծի մասին: Անհրաժեշտ է, որ.

- տեղեկությունները պարբերաբար թարմացվեն
- վեբ-կայքում զետեղվեն նախագծի փաստաթղթերը
- հաշվարկվեն վեբ-կայք այցելությունները
- հասանելի լինեն մեկնաբանություններ թողնելու հնարավորությունները (մեկնաբանությունը թողնողին նույնականացմամբ)
- մեկնաբանությունները հավաքվեն
- մեկնաբանությունների վերաբերյալ զեկուցվի և դրանք հաշվի առնվեն

<u>Սոցիալական կայքեր</u>

Երևանի քաղաքապետարանը պետք է տեղեկությունները տարածի սոցիալական կայքերի միջոցով: Անհրաժեշտ է, որ.

- տեղեկությունները պարբերաբար թարմացվեն
- զետեղվեն նախագծի փաստաթղթերը
- հասանելի լինեն մեկնաբանություններ թողնելու հնարավորությունները (մեկնաբանությունը թողնողին նույնականացմամբ)
- մեկնաբանությունները հավաքվեն
- մեկնաբանությունների վերաբերյալ զեկուցվի և դրանք հաշվի առնվեն

<u>Լրատվամիջոցներով իրականացվող գործողություններ</u>

- Հանրային մասնակցությամբ հանդիպումներին մասնակցելու հրավեր
- Նախագծի վեբ-կայքն այցելելու հրավեր
- Նախագծի մասին տեղեկությունների տրամադրում
- Հանրային հանդիպումների ամսաթվերի մասին տեղեկացում

ՎԶԵԲ վեբ-կայք

- ՎԶԵԲ քաղաքականության պահանջները կատարելու նպատակով Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՍԱԳ) փաթեթը պետք է 120 օր ժամկետով հրապարակվի: Փաթեթը ներառում է.

ՈՏԱ (NTS)

ՇՄՍԱԳ

ԲՍԳԾ

ՇՆԾ

ԿՊՎՇԾ

## 1.9 Հանրային քննարկումներ և հրապարակում

### 1.9.1 Առաջին հանդիպում

Առաջին հանդիպումը կայացել է 2014 թվականի հոկտեմբերի 28-ին՝ Երևանի քաղաքապետարանում: Այս հանդիպման նպատակը ընտրված շահառուների (օրինակ՝ լիազոր մարմինների, ՀԿ-ների, վարչական շրջանի ղեկավարների) տեղեկացումն էր: Հետագայում շահառուներին կներկայացվի և կքննարկվի նաև ծրագրի իրականացման մեթոդաբանությունը:

Շահառուները հրավիրվել էին ծրագիրը նախաձեռնողի կողմից՝ Բնապահպանության նախարարությունից դրա թույլտվությունը ստանալուց անմիջապես հետո:

Նախագիծը ներկայացվել էր անգլերեն և հայերեն: Պրեզենտացիան բաժանվել էր մասնակիցներին՝ անգլերեն և հայերեն տարբերակներով:

### 1.9.2 Երկրորդ հանդիպում

Երկրորդ հանդիպումը նախատեսվում է պատվիրատուի և ՎԶԵԲ-ի կողմից ԲՍՀՈՒ-ի հաստատումից հետո՝ 2015 թվականին:

Այս հանդիպումը բաց կլինի հետաքրքրվողների հնարավոր ավելի լայն շրջանակի համար: Համապատասխանաբար, հանդիպման մասին կհայտարարվի Երևանի քաղաքապետարանի վեբ-կայքում և տեղական թերթերում:

Կհրապարակվեն հայտարարություններ: Հանդիպումը կանցնի անգլերեն և հայերեն լեզուներով: Պրեզենտացիան մասնակիցներին կբաժանվի անգլերեն և հայերեն տարբերակներով:

## 1.10 Հանրային բողոքների մեխանիզմ

Ցանկացած մեկնաբանություն կամ մտահոգություն պետք է ներկայացվի ընկերությանը՝ բանավոր կամ գրավոր տարբերակով (փոստով կամ էլեկտրոնային փոստով) կամ բողոքի թերթիկ լրացնելով:

Բոլոր բողոքները պետք է գրանցվեն, ստանան հերթական համար և դիտարկվեն 7 օրվա ընթացքում: Պատասխանը պետք է տրվի 30 օրվա ընթացքում: Բանվորների համար պետք է գործի բողոքների առանձին մեխանիզմ:

**Բողոքների դիտարկման սխեմա**




**Բողոքների ներկայացման հասցե**

**Երևանի քաղաքապետարան – Ասիական զարգացման բանկ**

**Տիկին Նորա Մարտիրոսյան**

Ներդրումային ծրագրերի իրականացման բաժին

«Երևանի կառուցապատում»

Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր
Հասցե՝ Երևան, Բուզանդի 1/3, 5-րդ հարկ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ nora.martirosyan@yerevan.am

Գնումների բաժնի ղեկավարը պատասխանատու է բողոքներին արձագանքման և դրանց ընթացք տալու համար: Նոր աղբավայրի շահագործման փուլում բողոքներին արձագանքելու և դրանց մշակման (բողոքների մեխանիզմի) համար պատասխանատու է ընդհանուր ղեկավարությունը: